ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գողթ գյուղական համայնքի հաշվետու համայնքային ժողովի

19.08.2013թ գ. Գողթ

2013թ օգոստոսի 19-ին տեղի ունեցավ Գողթ համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՄԲ՝
Համայնքի ավագանու անդամներ՝

1. Գալստյան Սամվել Սլավի
2. Հարությունյան Լևոն Վրեժի
3. Հովասափյան Բաբիկ Վրեժի
4. Հովսեփյան Վարիչ Լյուդվիգի
5. Մովսիսյան Ալեքսան Աղասիի
6. Ստեփանյան Արտեմ Գառնիկի

Համայնքի ղեկավարի աշխատակազմից՝

1. Ոստանիկ Խաչատրյան
2. Սիրակ Հովսեփյան
3. Աբել Ղարիբյան
4. Աղվան Կարապետյան
5. Արեգնազ Կարապետյան
6. Թամարա Կարապետյան
7. Տիգրան Պետրոսյան

Համայնքի բնակիչներ՝ 115

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ղեկավարի հաշվետվությունը

2. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ՝ համայնքի ղեկավար Արտավազդ Հակոբյանի զեկուցումը

Ա. Հակոբյանը ողջունեց ավագանու անդամներին և ընդհանուր ժողովի բոլոր մասնակիցներին՝ շնորհակալություն հայտնելով նրանց համայնքում առկա խնդիրների քննարկմանը մասնակցելու համար:

- Այսօր մենք հավաքվել ենք ևս մեկ անգամ խոսելու վերջին մեկ տարում կատարված աշխատանքների մասին, ինչպես նաև քննարկելու առաջիկայում մեր անելիքները:

Ուրախալի է, որ անցկացված 1 կմ ջրագծին կարողացանք ավելացնել ևս 3 կմ, հին խողովակաշարերը փոխարինվել են նորով, համայնքի ողջ բնակչությունը ապահովված է խմելու ջրով: Գյուղի զարգացման ծրագրի շրջանակներում մեծ հաջողություն էր նոր թաղամասի էլեկտրիֆիկացման իրականացումը, ինչպես նաև գազիֆիկացումից դուրս մնացած մեկ այլ թաղամասում գազատարի անցկացումը, որի աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են: Նախորդ տարիների համեմատ հաջողություններ ենք գրանցել հողի հարկի, գույքահարկի, վարձավճարների և մնացած հարկային պարտավորությունների գործում:

Ցավոք, թերությունները շարունակում են պահպանվել քաղաքաշինության բնագավառում: Պետք է ասեմ, որ բազմիցս զրուցել եմ այդ ոլորտում ապօրինի շինություններ կառուցած բնակիչների հետ, առաջարկել նրանց համապատասխան ժամանակացույց՝ սխալները շտկելու համար:

ԵԼՈՒՅԹՆԵՐ

Ժողովին հնչեցին բնակիչների ելույթներ, ովքեր շնորհակալություն հայտնեցին կատարված աշխատանքների համար և խոստացան այսուհետ նույնպես ակտիվորեն մասնակցել համայնքի զարգացման հիմնախնդիրների լուծման գործընթացին:

ՈՐՈՇՎԵՑ՝

հաշվետվությունն ընդունել ի գիտություն

Համայնքի ղեկավար՝ Ա. Հակոբյան